«ՊԱՇՏՊԱՆԻՐ ՋՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՈ ԻՐԱՎՈՒՆՔԸ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ԷԿՈԼՈՒՐ» ՀԿ-Ի ԱՆՑԿԱՑՐԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացվող «Պաշտպանիր ջրի նկատմամբ քո իրավունքը» ծրագրի շրջանակներում 2019 թվականի մարտի 29-ին ԷկոԼուրի թիմն այցելեց Արարատի մարզի Հայանիստ համայնք:

Համայնքապետարանում և համայնքի բնակիչների մոտ անցկացրած հարցումների արդյունքները

Հայանիստ համայնք

Հայանիստ համայնքը գտնվում է Մասիսի տարածաշրջանում՝ Մասիս քաղաքից 8 կմ հյուսիս-արևմուտք: Գյուղը տեղադրված է Հրազդան գետի աջ ափին, միջինարաքսյան գոգավորությունում: Ծովի մակարդակից ունի 850մ բարձրություն: Կլիման չոր, խիստ ցամաքային է: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300մմ է: Բնական լանդշաֆտները կիսանապատներ են:

Նկ.1 Հայանիստ

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 2268 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 1086-48% և կանայք՝ 1182--52%: Բնակչության մեջ մինչաշխատունակ տարիքի բնակիչները կազմում են 12%, աշխատունակները՝ 64%, հետաշխատունակները՝ 24%: Գյուղն ունի 603 տնտեսություն: Ունի դպրոց, մանկապարտեզ, կապի հանգույց, բուժկետ:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 374հա: Համայնքի հողերի հիմնական մասն օգտագործվում են որպես վարելահողեր՝ զբաղեցնելով մոտ 231հա: Ունի պտղատու և խաղողի այգիներ: Զբաղվում են այգեգործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբոստանային կուլտուրաներ, ինչպես նաև հացահատիկ: Արոտավայրերը զբաղեցնում են 41 հա: Զբաղվում են նաև կաթնամսատու անասնապահությամբ, թռչնաբուծությամբ:

Համայնքի վարչական տարածքում գործում են 4 ձկնային տնտեսություն, որոնք շահագործում են 10 խորքային հոր, տարեկան 20,692 մլն խմ ջրօգտագործման թույլտվությամբ՝

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման ջրի հիմնախնդիրը: Ջրի բացակայության պատճառով համայնքի ոռոգելի տարածքների ավելի քան 150 հա-ն այսօր չի ոռոգվում: Ոռոգումն իրականացվում է միայն 80 հա տարածքում: Համայնքում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը վտանգում է գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը: Համայնքը չունի կոյուղու համակարգ:

2017-2021թթ. համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով առաջարկվում է ջրամատակարարման համակարգերի կառուցում և ջրամատակարարման բարելավման 2 բաղադրիչներ՝ 1. Ոռոգման ցանցերի կիսախողովակների տեղադրում՝ ծրագրի մոտավոր արժեքը՝ 10,0 մլն. դրամ, 2. Խմեու ջրագծերի վերանորոգում՝ 20,0 մլն. դրամ գումարով:

Համապատասխան ֆինանսական միջոցների բացակայությամբ պայմանավորված այդ ծրագրերի իրականացման համար նախատեսվում է դիմել ՀՀ Կառավարությանը կամ դոնոր կազմակերպություններին:

Ծրագրի «Հանդիպումներ բնակիչների հետ՝ խնդիրները լսելու և լուսաբանելու, հարցաթերթիկի լրացման համար» 1.1 բաղադրիչի շրջանակներում կայացած հանդիպման արդյունքում լրացվել է ջրի իրավունքի հետ կապված 19 հարցերից կազմված 18 հարցաթերթիկ:

Հարցման նպատակն էր պարզել՝

- բնակիչների խմելու և ոռոգման ջրի իրավունքների խախտումների դեպքերը
- խմելու և ոռոգման ջրի վերաբերյալ տեղեկատվություն պահանջելու և ստանալու խախտումների դեպքերը

- խմելու և ոռոգման ջրի մատակարար «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի և « Երևան» ՋՕԸ-ի աշխատանքների գնահատականը
- ջրի իրավունքները սահմանող ՀՀ օրենսդրության վերաբերյալ բնակիչների տեղեկացվածության աստիճանը
- բնակչության՝ ջրի իրավունքի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը
- վերջին տարիներին Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի նվազման պատճառներին վերաբերող բնակիչների գնահատականը
- ձկնային տնտեսությունների զարգացման վերաբերյալ բնակիչների մոտեցումները:

Հարցաթերթիկների վերլուծության արդյունքները

Անցկացված հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ բնակիչներն ունեն ջրի խնդիր, սակայն մեծ մասը չի ընկալում դա որպես ջրի նկատմամբ իրավունքի խախտում:

1. Ըստ հարցման արդյունքների՝ վերջին 10 տարում խախտվել են ջրի նկատմամբ իրավունքները /հարցվածների 40%-ը/. դժվարացել են պատասխանել՝ 36, 7 %-ը:
2.



Նկ. 2

3. Հարցվածների 43,75%-ը կարծում է, որ վերջին է 10 տարում խմելու ջրի տհաճ համի ձեռք բերման պատճառով իրենք զրկվել են խմելու համար բավարար որակի ջուր ունենալու իրավունքից:

4. Հարցվածների 26,6%-ի համաձայն՝նախկինում օգտագործվող հորերի ցամաքելու հետևանքով իրենք զրկվել են խմելու համար բավարար քանակի ջուր ունենալու իրավունքից:
5.
6. Հարցվածների 29,65%-ի համաձայն՝ իրենք զրկվել են կոմունալ-կենցաղային կարիքների բավարարման նպատակով անհրաժեշտ որակի և քանակի ջուր ստանալու իրավունքից:
7. 26,6%-ը կարծում է, որ զրկվել են աշխատանքի և սեփական ապրուստի եկամուտներ ունենալու իրավունքից, քանի որ մշակովի հողատարածքների ոռոգման համար անհրաժեշտ որակի և քանակի ջուրը չի բավարարում:
8. 20,0 %-ը կարծում է, որ ջրի խնդիրները և դրանց լուծման ճանապարհները չեն հանրայնացվում:
9. Չնայած նրան, որ հարցվածների 20%-ը պատասխանել է, որ ամբողջությամբ ծանոթ է ջրի իրավունքները սահմանող ՀՀ օրենսդրությանը, այնուամենայնիվ դրական պատասխան տվողներից ոչ-ոք չի կարողացել նշել կարգավորող նորմատիվ ակտերի ամբողջականությունը:
10. 46,66%-ը կարծում է, որ ջրի սակավությունը և խորքային հորերի ցամաքելու պատճառը պայմանավորված է Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի՝ ձկնաբուծության նպատակով անխնա և անսահմանափակ օգտագործման հետ, իսկ 20,01%-ն դժվարացել է այդ կապը գնահատելու հարցում: 33,33 %-ը կարծում է, որ ձկնաբուծության ծավալների մեծացումը չի ազդում ջրի սակավության և դրա որակական փոփոխությունների և խորքային հորերի ցամաքեցման վրա:
11. Բնակիչների 38,46% կարծիքով՝ ոռոգման ջրի մատակարար «Երևան» ՋՕԸ-ն ոռոգման ջուրը բաշխում է անարդարացի, 23,07 %-ը կարծում է, որ բաշխումն արդարացի է: 69,23%-ը հայտատարեցին, որ «Երևան» ՋՕԸ-ն չի ապահովել ջրի հաշվառքի սարքերով իրենց ոռոգելի տարածքների գլխամասը, հետևապես այդ սարքի ստուգաչափման, ցուցմունքի գրանցման, ժամանակավորապես չախատելու դեպքում դրա կապարակնքման պայմանի մասին բնակիչները իրազեկված չէին:
12. 53,3%-ը ստորագրել են ոռոգման ջրի մատակարարման պայմանագիրն՝ առանց դրանում ամրագրված պայմաններին ծանոթանալու: Ըստ համայնքապետի՝ ոռոգման ջրի մատակարարման պահանջարկի հայտ ընդհանրապես չի ներկայացվում:
13. Ջրի վերաբերյալ տեղեկատվություն պահանջելու և ստանալու հարցում բնակիչների վերաբերունքն ակտիվ չէ: Իրենց այդ իրավունքի իրացման

նպատակով երբևէ չի օգտվել հարցվածների 46,6%-ը, իսկ 26,6 %-ին չեն պատասխանել։

14.
15. 43,75%-ը ծանոթ չէ ձկնաբուծության նպատակով համայնքի վարչական տարածքի հողերի վարձակալության, կամ օտարման պայմաններին։
16. Հողերը ձկնաբուծության նպատակով վարձակալության տրման վերաբերյալ կայացրած որոշումների ընդունման մասին ավագանին ժամանակին չի իրազեկել համայնքի բնակչությանը: 50%-ը փաստում է, որ չի իրազեկվել, 43,75%–ը նշել է, որ դժվարանում է պատասխանել այդ հարցին։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հարցման արդյունքների բացահայտումների հիման վրա կարելի է **եզրակացություն** անել, որ Հայանիստ համայնքում խախտվել են՝

1. Բնակչի կյանքի և անվտանգության համար համապատասխան որակի և քանակի խմելու ջուր ունենալու իրավունքը:
2. Տարածաշրջանին առանձնահատուկ գյուղատնտեսությամբ զբաղվելու բնակչի աշխատանքի իրավունքը՝ դրա համար համապատասխան որակի և քանակի ոռոգման ջուր չունենալու հետևանքով:
3. Ջրային ոլորտում բնակչի տեղեկատվություն ստանալու իրավունքը:
4. Ջրային ոլորտում որոշումների կայացման մեջ մասնակցություն ունենալու իրավունքը։
5. «Երևան» ՋՕԸ-ի հետ կնքված ոռոգման ջրի մատակարարման պայմանագրային իրավունքները։

Սույն հաշվետվությունը կազմվել է «Պաշտպանիր ջրի նկատմամբ քո իրավունքը» ծրագրի շրջանակներում Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության միջոցով, որի ընթացքում արտահայտված տեսակետները կամ ներկայացված նյութերի բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները: